# Եկ, հետևիր ինձ.
# միջոցառումներ

***Ընտանեկան երեկոյի համար, սուրբ գրությունների ուսումնասիրության համար, կամ պարզապես զվարճանալու համար:***

ՄՈՍԻԱ 4–6-Ի ՀԱՄԱՐ

## Քայլեք Նրա ոտնահետքերով

Մոսիա թագավորը պահում էր պատվիրանները և «քայլում էր Տիրոջ ուղիներով» (Մոսիա 6.6): Թղթի վրա հետագծեք ձեր ոտքը և կտրեք հանեք պատկերը: Գրեք ձեր ոտնահետքի վրա մի ուղի, որով կարող եք հետևել Հիսուսին: Դրեք ձեր ոտնահետքն այնտեղ, որը կհիշեցնի ձեզ՝ հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին:

**Կրտսեր խմբի երեխաների համար.** Գնացեք զբոսանքի: Հորդորեք, որ ձեր երեխան փորձի քայլել այնտեղով, որտեղով դուք եք քայլել եք: Խոսեք այն մասին, թե ինչպես կարող ենք հետևել Հիսուս Քրիստոսին՝ անելով այն բաները, որոնք Նա է արել, ինչպես օրինակ օգնելով մյուսներին և մկրտվելով:

ՄՈՍԻԱ 7–10-Ի ՀԱՄԱՐ:

## Հետևեք մարգարեին

Ամոնն ուսուցանեց, որ մարգարեները կարող են տեսնել գալիք բաները (տես Մոսիա 8.16–17): Բացեք 2-րդ էջը և կարդացեք գերագույն համաժողովից նախագահ Նելսոնի ուղերձը: Նա մեզ ի՞նչ ուսուցանեց: Այդ մասին մի նկար նկարեք և ուղարկեք մեզ՝ *Ընկեր* ամսագրին:

**Կրտսեր խմբի երեխաների համար.** Երգեք «Մարգարեին հետևիր» (*Մանկական երգարան*, 110–11) ձեր երեխաների հետ: Ամեն անգամ *մարգարե* բառը երգելիս, մատնացույց արեք մարգարեի նկարը:



ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՔԵԹԻ ԴՈՒՐԻՆ

ՄՈՍԻԱ 11–17-Ի ՀԱՄԱՐ:

## Լույս խավարում

Աբինադին ուսուցանեց, որ Հիսուս Քրիստոսն է «լույսը, որն անվեջ է, որը երբեք չի կարող խավարեցվել» (Մոսիա 16.9տնել այն խավարում»: Թաքցրեք մի իր տան մեջ: Անջատեք լույսերը և հանձնարարեք բոլորին փորձել գտնել այն խավարում: Այնուհետև թաքցրեք իրը և փորձեք գտնել այն միացված լույսերով կամ լապտերներով: Ո՞րն էր ավելի հեշտ ձևը: Ինչպե՞ս է Հիսուսն օգնում մեզ, ինչպես լույսն օգնեց ձեզ:

**Կրտսեր խմբի երեխաների համար.** Հանձնարարեք ձեր երեխային փորձել միացնել և անջատել լապտերիկը կամ լամպը: Հետո խոսեք այն մասին, թե ինչպես է Հիսուս Քրիստոսը լույս, որը երբեք չի կարող թաքցվել կամ անջատվել:

ՄՈՍԻԱ 18–24-Ի ՀԱՄԱՐ

## Միությամբ միավորված սրտեր

Ալման ուսուցանեց մեզ ունենալ «միությամբ և սիրով միավորված սրտեր»:(Մոսիա 18.21): Դա նշանակում է, որ մենք պետք է աշխատենք միասին և սեր ցույց տանք մյուսների հանդեպ: Սարքեք սրտերի շարան՝ ձեզ հիշեցնելու համար: Կտրեք թղթե սրտիկներ և դրանցից յուրաքանչյուրի վրա գրեք ընտանիքի անդամի մեկ անուն: Կենտրոնում մի անցք բացեք և լարի վրա անցկացրեք դրանք, որպեսզի սրտերը միացած լինեն: Կախեք ձեր սրտիկների շղթան այնտեղ, որտեղ հաճախ կտեսնեք այն:

**Կրտսեր խմբի երեխաների համար.** Հարցրեք ձեր երեխային ընտանիքի յուրաքանչյուր անձի մասին մեկ բան, որն իրենք հավանում են: Պատմեք ձեր երեխային մի բան, որն իրենք անում են՝ցույց տալու սեր ուրիշների հանդեպ: